ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԲԱՇՁԲ-02/16>>

ք. Երևան <<22>> նոյեմբերի 2016թ.

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Գոռպլաստ>> ՍՊԸ և <<Վահագն 94>> ՍՊԸ կոնսորցիումը, ի դեմս <<Գոռպլաստ>> ՍՊԸ-ի՝ տնօրեն Գ.Թադևոսյան, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով կոնսորցիումի անդամների միջև 26.10.2016թ. կնքված համատեղ գործունեության N 05 պայմանագրի (այսուհետ՝ Համատեղ գործունեության պայմանագիր, պատճենը կցվում է), 2.3 կետը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված կապալային աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝

1-ին չափաբաժնի համար՝ Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30-րդ օրացուցային օրը.

2-րդ չափաբաժնի համար՝ Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30-րդ օրացուցային օրը:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել Համատեղ գործունեության պայմանագրով, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իրենց ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երեք օրինակ (Հավելված N 4) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի

մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ[1] սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **3 347 000 (երեք միլիոն երեք հարյուր քառասունյոթ հազար)** ՀՀ դրամ (Կապալառուն ԱԱՀ վճարող չէ): Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին՝ **1 834 000 (մեկ միլիոն ութ հարյուր երեսունչորս հազար)** ՀՀ դրամ:

2-րդ չափաբաժին՝ **1 513 000 (մեկ միլիոն հինգ հարյուր տասներեք հազար)** ՀՀ դրամ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով

[1] *ՀՀ կառավարության 08.05.2003թ. N 626-Ն որոշումը փոփոխվել է 19.03.2015թ. N 596-Ն որոշմամբ, որով կարգավորվում են տվյալ իրավահարաբերությունները:*

տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ, քան 25.12.2016թ.՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[2].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում

---

[2] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով. մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.8 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու

վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.9 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է **19** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, Համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ

Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

ՀՎՀՀ՝ 02583241

Հ/Հ՝ 900011192151

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Գ. Գրիգորյան

(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Գոռպլաստ>> ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, գ. Գոռավան, Վ.Սարգսյան 49

ՀՎՀՀ՝ 04228648

Հ/Հ՝ 2472401541920000

<<Արդշինբանկ>> ՓԲԸ, Նոր Նորք մ/ճ

Տնօրեն՝ Գ.Թադևոսյան

(ստորագրություն)

Հավելված թիվ 1
<< 22 >> նոյեմբերի 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ-02/16>> գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[3]

1) <u>Չափաբաժին 1.</u> ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	ՉՄ	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը
				ՀՀ դրամ	ՀՀ դրամ
1	3	4	5	6	7
1	**ՀԱՏՎԱԾ 1 և 2** **Քանդման ծավալներ** **Պատերի հարդարված մակերևույթի քանդում**	քմ	26.96	228.078	6148.98
2	Առաստաղի հարդարված մակերևույթի քանդում	քմ	9.38	228.078	2139.37
3	Մետալոպլաստե դռների ապամոնտաժում և պահեստավորում	քմ	3.85	1587.161	6110.57
4	էլ. լուսատուների ապամոնտաժում և պահեստավորում	հատ	2.00	471.828	943.66
5	Գիպսոստվարաթղթե պատերի մեջ դռան բացվածքների իրականացում 3.85 քմ	գծմ	3.85	378.053	1455.50
6	Հատակներից կերամիկական երեսապատման սալիկների քանդում	քմ	9.38	536.491	5032.29
7	ՀԱՏՎԱԾ 3 Քանդման ծավալներ Պատերի հարդարված մակերևույթի քանդում	քմ	47.3	228.078	10788.09
8	Առաստաղի հարդարված մակերևույթի քանդում	քմ	21.6	228.078	4926.48
9	Փայտի շրիշակների քանդում	գծմ	19.3	14.034	270.86
10	էլ. լուսատուների ապամոնտաժում և պահեստավորում	հատ	1	471.828	471.83
11	ՀԱՏՎԱԾ 4 Քանդման ծավալներ Պատերի հարդարված մակերևույթի քանդում	քմ	59.7	228.078	13616.26
12	Առաստաղի հարդարված մակերևույթի քանդում	քմ	34.1	228.078	7777.46
13	Փայտի շրիշակների քանդում	գծմ	23.3	14.034	327.00
14	էլ. լուսատուների ապամոնտաժում և պահեստավորում	հատ	1	471.828	471.83
15	Շինաղբի բարձում ավտոմեքենաների վրա	տն	0.6	545.417	327.25
16	Շինաղբի տեղափոխում 13 կմ հեռավորության վրա	տն	0.6	2727.085	1636.25

[3] *Հրապարակված ծավալաթերթ-նախահաշիվը՝ ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:*

17	**ՀԱՏՎԱԾ 1 և 2Վերանորոգման ծավալներՊատերի ներկում լատեկսային ներկով**	քմ	45.48	1512.852	68804.51
18	Առաստաղների ներկում լատեկսային ներկով	քմ	9.38	1684.724	15802.71
19	Ապամոնտաժված էլ. լուսատուների տեղադրում	հատ	2.00	943.656	1887.31
20	Հատակների իրականացում 400*400*6մմ չափերով փայլատ մամլագրանիտե սալերից	քմ	9.38	9506.686	89172.72
21	Պատերի երեսապատում գիպսոկարտոնե հարթասալերով	քմ	11.27	11456.373	129113.33
22	Շեպերի նորոգում գիպսոստվարաթղթով	քմ	7.16	6729.181	48180.94
23	Ապամոնտաժված մետալոպլաստե դռների տեղադրում	քմ	3.85	1914.632	7371.33
24	Մետալոպլաստե դռան տեղադրում սպիտակ գույնի, 60մմ հաստ. պրոֆիլ	քմ	1.89	35860.810	67776.93
25	Մետալոպլաստե վիտրաժների տեղադրում սպիտակ գույնի պրոֆիլներից/բաց մաս/	քմ	1.89	26616.180	50304.58
26	Մետալոպլաստե վիտրաժների տեղադրում սպիտակ գույնի պրոֆիլներից/փակ մաս/	քմ	17.06	18169.094	309964.75
27	Մետալոպլաստե վիտրաժների տեղադրում սպիտակ գույնի պրոֆիլներից/սլայդ/	քմ	1.89	45901.836	86754.47
28	Ալյումինե դռների տեղադրում, սպիտակ գույնի պռոֆիլներից/սլայդ/	քմ	9.24	63115.025	583182.83
29	ՀԱՏՎԱԾ 3 Վերանորոգման ծավալներ Պատերի ներկում լատեկսային ներկով	քմ	47.3	1512.852	71557.90
30	Առաստաղների ներկում լատեկսային ներկով	քմ	21.6	1684.724	36390.04
31	Հատակների պատրաստում 10 մմ հաստությամբ, 33 դասի /համարժեք՝AC 5/ լամինացված մանրատախտակից, սպունգի տեղադրումով	քմ	21.6	7889.231	170407.40
32	Լամինացված ՄԴՖ-ից շրիշակների տեղադրում h=80 մմ	գծմ	19.4	1039.337	20163.14
33	Ապամոնտաժված էլ. լուսատուների տեղադրում	հատ	1	943.656	943.66
34	Հին վարդակների ապամոնտաժում և նոր խրոցակի վարդակի տեղադրում հողանցման հպակով, պատի մեջ 16Ա, 220Վ	հատ	4	2313.402	9253.61
35	ՀԱՏՎԱԾ 4 Վերանորոգման ծավալներ Պատերի ներկում լատեկսային ներկով	քմ	59.7	1512.852	90317.27
36	Առաստաղների ներկում լատեկսային ներկով	քմ	34.1	1684.724	57449.09
37	Հատակների պատրաստում 10 մմ հաստությամբ, 33 դասի /համարժեք՝AC 5/ լամինացված մանրատախտակից, սպունգի տեղադրումով	քմ	34.1	7889.231	269022.79
38	Լամինացված ՄԴՖ-ից շրիշակների տեղադրում h=80 մմ	գծմ	23.3	1039.337	24216.55
39	Ապամոնտաժված էլ. լուսատուների տեղադրում	հատ	1	943.656	943.66
40	Հին վարդակների ապամոնտաժում և նոր խրոցակի վարդակի տեղադրում հողանցման հպակով, պատի մեջ 16Ա, 220Վ	հատ	9	2313.402	20820.62

Ընդամենը	2 292 245.8
Չնախատեսված աշխատանքների եւ ծախսեր պահեստային միջոցներ՝ 3%	68 767.4
Ընդամենը	2 361 013.2
Շահույթ՝ 11%	259 711.4
Ընդամենը	2 620 724.6
ԱԱՀ՝ 20%	524 144.9
Ընդհանուրը	3 144 869.5

2) Զափաբաժին 2. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	ՉՄ	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը
				ՀՀ դրամ	ՀՀ դրամ
1	3	4	5	6	7
1	ՀԱՏՎԱԾ 1 Քանդման ծավալներ Պատերի հարդարված մակերևույթի քանդում	քմ	86.56	228.078	19742.43
2	Առաստաղի հարդարված մակերևույթի քանդում	քմ	36.33	228.078	8286.07
3	Փայտի շրիշակների քանդում	գծմ	33.70	14.034	472.95
4	էլ. լուսատուների ապամոնտաժում և պահեստավորում	հատ	13.00	471.828	6133.76
5	ՀԱՏՎԱԾ 2 Քանդման ծավալներ Պատերի հարդարված մակերևույթի քանդում	քմ	135.4	228.078	30881.76
6	Առաստաղի հարդարված մակերևույթի քանդում	քմ	95.5	228.078	21781.45
7	Կերամոգրանիտի վնասված հատվածների քանդում	քմ	20	536.491	10729.82
8	Նոր շարվող պատի տակ կերամոգրանիտի քնդում	քմ	2.2	536.491	1180.28
9	էլ. լուսատուների ապամոնտաժում և պահեստավորում	հատ	9	471.828	4246.45
10	Շինաղբի բարձում ավտոմեքենաների վրա	տն	1.3	545.417	709.04
11	Շինաղբի տեղափոխում 13 կմ հեռավորության վրա	տն	1.3	2727.085	3545.21
12	ՀԱՏՎԱԾ 1 Վերանորոգման ծավալներ Պատերի ներկում լատեկսային ներկով	քմ	86.56	1512.852	130952.48
13	Առաստաղների ներկում լատեկսային ներկով	քմ	36.33	1684.724	61206.02
14	Ապամոնտաժված էլ. լուսատուների տեղադրում	հատ	13	943.656	12267.52
15	Հատակների իրականացում լամինացված 8մմ հաստությամբ մանրահատակից սպունգով	քմ	36.33	5112.776	185747.14
16	ՄԴՖ-ից շրիշակների տեղադրում h=100	գծմ	33.7	1139.073	38386.75

17	ՀԱՏՎԱԾ 2 Վերանորոգման ծավալներ Միջնորմների իրականացում 200 մմ բետոնե բլոկներից	խմ	7.7	23958.173	184477.93
18	Բլոկների անցքերի լցափակում B-15 դասի բետոնով	խմ	0.08	37940.567	3035.25
19	Միջնորմների ամրանավորում Ac I Φ8 և A500C Φ8 ամրաններով	տն	0.07	521686.251	36518.04
20	Նոր շարված պատերի երկկեղմանի բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	77.1	3610.551	278373.48
21	Պատերի ներկում լատեկսային ներկով	քմ	212.5	1512.852	321481.07
22	Առաստաղների ներկում լատեկսային ներկով	քմ	95.5	1684.724	160891.13
23	Մետալոպլաստե բլոկով, 60 մմ հաստությամբ, 4+4 կրկնաշերտ ապակեփաթեթով, սպիտակ փեղկերով դռների տեղադրում	քմ	1.89	42077.066	79525.65
24	Մետալոպլաստե բլոկով, 60 մմ հաստությամբ, 4+4 կրկնաշերտ ապակեփաթեթով, սպիտակ փեղկերով պատուհանների տեղադրում /փակ մաս/	քմ	2.32	25532.896	59236.32
25	Կերամոգրանիտե սալիկների իրականացում	քմ	20	9506.686	190133.73
26	Կերամոգրանիտե սալիկներից շրիշակների տեղադրում h=100/նոր շարված պատի հատված/	քմ	2.63	11183.686	29413.10
27	Դռների ապակիների մգեցում ինքնակպչուն թաղանթով	քմ	18.9	2773.193	52413.35
28	Ապամոնտաժված էլ. լուսատուների տեղադրում	հատ	9	943.656	8492.90
Ընդամենը					**1 940 261.1**
Չնախատեսված աշխատանքների եւ ծախսեր պահեստային միջոցներ՝ 3%					58 207.8
Ընդամենը					**1 998 468.9**
Շահույթ՝ 11%					219 831.6
Ընդամենը					**2 218 300.5**
ԱԱՀ՝ 20%					443 660.1
Ընդհանուրը					**2 661 960.6**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Տնօրեն՝ Կ. Փոլադյան

(կնիք եւ ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Գոռպլաստ>> ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, գ. Գոռավան, Կ.Սարգսյան 49
ՀՎՀՀ՝ 04228648
Հ/Հ՝ 2472401541920000
<<Արդշինբանկ>> ՓԲԸ, Նոր Նորք մ/ճ

Տնօրեն՝ Գ. Ղազարյան

(կնիք եւ ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված թիվ 2
<<22>> նոյեմբերի 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ-02/16>> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
	Չափաբաժին 1 ***ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ***		
1	Քանդման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում
2	Միջնորմների իրականացման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում
3	Սվաղի աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում
4	Դռների տեղադրման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում
5	Ինժեներական ցանցերի մոնտաժման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում
6	Հարդարման և հատակների իրականացման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում
7	Շինաղբի տեղափոխման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում
	Չափաբաժին 2 ***ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ***		
1	Քանդման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում
2	Միջնորմների իրականացման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում
3	Սվաղի աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում
4	Դռների տեղադրման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում
5	Ինժեներական ցանցերի մոնտաժման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում

6	Հարդարման և հատակների իրականացման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում
7	Շինաղբի տեղափոխման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ		**Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը**	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30-րդ օրացուցային օրը**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ

Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

ՀՎՀՀ՝ 02583241

Հ/Հ՝ 900011192151

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Գ.Գրիգորյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Գոռպլաստ>> ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, գ. Գոռավան, Վ.Սարգսյան 49

ՀՎՀՀ՝ 04228648

Հ/Հ՝ 2472401541920000

<<Արդշինբանկ>> ՓԲԸ, Նոր Նորք մ/6

Տնօրեն՝ Գ.Գաղլոսյան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 3
<< 22>> նոյեմբերի 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ-02/16>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում		
		նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ	1834000	1834000	**1834000**
2.	ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ	1513000	1513000	**1513000**
	Ընդամենը՝	**3347000**	**3347000**	**3347000**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ֆ.Ֆարսադանյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Գոռպլաստ>> ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, գ. Գոռավան, Վ.Սարգսյան 49
ՀՎՀՀ՝ 04228648
Հ/Հ՝ 2472401541920000
<<Արդշինբանկ>> ՓԲԸ, Նոր Նորք մ/ճ

Տնօրեն՝ Գ.Թադևոսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 4
<< 22>> նոյեմբերի 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ-02/16>> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» «_____» 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 4.1
<<22>> նոյեմբերի 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ-02/16>> գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ------- -ին կնքված N --------
(Կապալառուի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 05

ք. Վեդի « 26 » հոկտեմբեր 2016 թ.

«_Գոռպլաստ_» ՍՊԸ-ն, այսուհետև՝ «Գործընկեր-1», ի դեմս ընկերության տնօրեն՝ Գ. Թադևոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից, և «_Վահազն 94» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն՝ Է. Հակոբյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա այսուհետև՝ «Գործընկեր-2 մյուս կողմից, միասին «Գործընկերներ», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կողմերը միացնում են իրենց մասնագիտական ունակությունները, ֆինանսական, տեխնիկական, աշխատանքային ռեսուրսները և այն ամենը, ինչը անհրաժեշտ կլինի շինարարական աշխատանքների կատարման համար և պարտավորվում են առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ (կոնսորցիումով)՝ շահույթ ստանալու համար՝ *ՀՀ դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկ*-ի կողմից կազմակերպված *ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ-02/16* ծածկագրով ընթացակարգի 1,2 չափաբաժիններին համատեղ մասնակցելու և հաղթելու դեպքում ընթացակարգով նախատեսված շինարարական աշխատանքների համատեղ կատարման նպատակով:

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գնման ընթացակարգին մասնակցելու և *ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ-02/16* ծածկագրով ընթացակարգի 1,2 չափաբաժիններին հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու նպատակով.

ա) **Գործընկեր-1**-ն ապահովում է հրավերով սահմանված՝

- աշխատանքային ռեսուրսների որակավորման չափանիշի առկայությունը 1,2 չափաբաժինների համար
- տեխնիկական միջոցներ որակավորման չափանիշի առկայությունը 1,2 չափաբաժինների համար
- հայտի ապահովումը՝ տուժանքի մասին համաձայնությունը 1,2 չափաբաժինների համար,

բ) **Գործընկեր-2**-ն ապահովում է հրավերով նախատեսված՝

- աշխատանքային ռեսուրսների որակավորման չափանիշի առկայությունը 1,2 չափաբաժինների համար
- մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշի առկայությունը 1,2 չափաբաժինների համար,
- ֆինանսական միջոցներ որակավորման չափանիշների առկայությունը 1,2 չափաբաժինների համար, այն մասին, որ հայտը ներկայացվելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.
- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

2. Ընդհանուր գործերը վարելը

2.1. Սույն պայմանագրով իրականացվող գործունեության ընդհանուր գործերը Կողմերը վարում են Հետևյալ կարգով

- Չափաբաժին 1-ի՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներում, ներգրավվում են «Գործընկեր-1»-ը, «Գործընկեր-2»-ը:
- Չափաբաժին 2-ի՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներում, ներգրավվում են «Գործընկեր-1»-ը, «Գործընկեր-2»-ը:

2.2. Կողմերի համատեղ գործունեության հաշվապահական հաշվառումը վարում է Գործընկեր 1-ը, ինչպես նաև մասնակցում է *ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ-02/16* ծածկագրով ընթացակարգի միջոցով գնման ընթացակարգին, կազմում, էլեկտրոնային ստորագրում է նշված ընթացակարգին առընչվող բոլոր փաստաթղթերը:

2.3. *ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ-02/16* ծածկագրով ընթացակարգի միջոցով գնման ընթացակարգում հաղթող ճանաչվելու դեպքում շինարարական աշխատանքների կատարման պայմանագիրը ստորագրում և կնքում է Գործընկեր 1-ը:

2.4. *ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ-02/16* ծածկագրով ընթացակարգի շինարարական աշխատանքների կատարման համար «Գործընկերներ»-ը լրացուցիչ համաձայնագրերի միջոցով կբաշխեն միմյանց մեջ գործունեության իրենց հասանելիք գործերը:

2.5. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ծանոթանալ համատեղ գործունեությանը վերաբերող բոլոր փաստաթղթերին և ստանալ այդ գործունեության մասին ցանկացած այլ տեղեկատվություն:

3. Կողմերի ընդհանուր գույքը

3.1. Կողմերի ներդրած գույքը, որի նկատմամբ մինչև ներդրումը նրանք ունեին սեփականության իրավունք, ինչպես նաև համատեղ գործունեության արդյունքում արտադրված արտադրանքը և այդպիսի գործունեությունից ստացված եկամուտները համարվում են նրանց ընդհանուր բաժնային սեփականությունը:

3.2. Կողմերի ներդրած գույքը, որին նրանք տիրապետում էին սեփականության իրավունքից տարբերվող հիմքերով, օգտագործվում է ի շահ Կողմերի և նրանց ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքի հետ կազմում է մասնակիցների ընդհանուր գույքը:

3.3. Կողմերն ընդհանուր գույքն օգտագործում են ընդհանուր համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանով սահմանված կարգով:

3.4. Ընդհանուր գույքի պահպանման կապակցությամբ՝ Կողմերի պարտականությունները և այդ պարտականությունները կատարելու հետ կապված ծախսերի հատուցումը կատարվում է համատեղ գործունեությունում Կողմերի ներդրած ավանդներին համամասնորեն:

4. Շահույթի բաշխումը

4.1. Կողմերի համատեղ գործունեության արդյունքում ստացված շահույթը բաշխվում է Կողմերից յուրաքանչյուրի ավանդի արժեքին համամասնորեն:

5. Կողմերի պատասխանատվությունն ընդհանուր պարտավորությունների համար

Սույն պայմանագրով Կողմերից յուրաքանչյուրն ընդհանուր պայմանագրային պարտավորությունների համար համապարտ պատասխանատվություն է կրում իր ամբողջ գույքով՝ անկախ դրանց ծագման հիմքից:

6. Բաժնեմասերի ստացման կարգը

6.1. Կողմերն իրավունք ունեն ազատ տնօրինելու ընդհանուր բաժնային սեփականությունում իրենց պատկանող բաժնեմասը՝ մյուս կողմի՝ այդ բաժնեմասը գնելու նախապատվության իրավունքի պահպանման պայմանով:

6.2. Բաժնեմասը գնելու նախապատվության իրավունքի կիրառման կարգը որոշվում է գործող օրենսդրությամբ:

7. Պայմանագրի գործունեության ժամկետը և լուծելու կարգը

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև *ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ-02/16* ծածկագրով շինարարական աշխատանքների կատարման պայմանագրի ավարտը:

7.2. Սույն պայմանագիրը դադարեցնել ցանկացող Կողմը պետք է այդ մասին գրավոր հայտնի մյուս Կողմին՝ դուրս գալու օրվանից ոչ ուշ, քան 2 (երկու) ամիս առաջ:

7.3. Պայմանագիրը լուծելու մասին հայտարարությունն ստացվելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում, Կողմերը պետք է բաժանեն ընդհանուր բաժնային սեփականություն համարվող գույքը:

7.4. Սույն պայմանագիրը կարող է դադարել նաև որպես հետևանք Կողմերից որևէ մեկին՝

7.4.1. անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչելու.

7.4.2. սնանկ ճանաչելու.

7.4.3. սույն պայմանագրին մասնակցող իրավաբանական անձի լուծարվելու դեպքում:

7.5. Կողմերը գիտակցում են, որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 36-րդ կետի 3)-րդ ենթակետի համաձայն՝ կոնսորցիումից նրա անդամի դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8. Այլ պայմաններ

Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գործընկեր-1	Գործընկեր-2
<<Գորպլաստ>> ՍՊԸ	<<Վահագն 94>> ՍՊԸ
Արարատի մարզ, գ. Գոռավան, Վ. Սարգսյան 49	Արարատի մարզ, ք. Վեդի, Ն.Ստեփանյան 19
ՀՎՀՀ 04228648	ՀՎՀՀ 04100422
"Արդշինբանկ" ՓԲԸ, Նոր Նորք մ/ճ	"Ակբա Կրեդիտ Ագրիկոլ" բանկ ՓԲԸ
h/h 2472401541920000	h/h 220123330262000
(ստորագրություն)	(ստորագրություն)